« ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ » ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ << ՏՊԻՉ ՍԱՐՔԵՐԻ >> ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N « ՄՏԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ-20/7»

ք. Մեղրի <<_28_>> օգոստոսի 2020թ.

« Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն » ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Վարդանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՓՄՁ սպասարկման գրասենյակ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ստյոպա Մաթևոսյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է << **ՏՊԻՉ ՍԱՐՔԵՐԻ** >> մատակարարում (այսուհետև՝ ապրանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 և N2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր, գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ապրանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ապրանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ապրանքի մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ապրանքի արդյունքը, իսկ Ապրանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ապրանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ապրանքի մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը

ատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված __365__ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

5.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ապրանքը ընդհանուր գինը կազմում է 490000 (չորս հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ապրանքի մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 30 դեկտեմբերի 2020թ.:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ապրանքի մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ապրանքը մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման , ինչպես նաև գնորդի մոտ քանակի պահանջի նվազման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի

կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

8.6 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ	«ՓՄՁ սպասարկման գրասենյակ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ ք. Մեղրի Գործարարների 42	ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի , Զ. Անդրանիկի 28/9
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ " մ/ճ Մեղրի	Բանկ " Արդշինբանկ "ՓԲԸ մ/ճ Մեղրի
Հ/Հ 16099003354200	Հ/Հ 2470201200090000
ՀՎՀՀ 09705024	ՀՎՀՀ 01259015
Էլ. Փոստ agarak-hosp@mail.ru	Էլ. Փոստ pmdz@list.ru
Հեռ.0286-60685	Հեռ. 093312233
Տնօրեն՝ ժ/պ / Ա. Օհանջանյան	Տնօրեն՝ / / Ս. Մաթևոսյան

Восстановимая подпись

X 28.08.2020

Styopa Matevosyan

Подписано: MATEVOSYAN STYOPA 2902640382

Հավելված 1
<<_28__>>__օգոստոսի_ 2020թ. կնքված
N«ՄՏԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ-20/7» ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չ/հ	ԳՄԱ դասա-կարգման (CPV)	անվանումը և ապրանքայինինշանը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Միավոր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	Գումարը
1	30239130/1	Տպիչ սարք Canon i-sensys MF 3010	Canon i-sensys MF 3010 (3inone) տպիչ սարք բազմաֆունկցիոնալ /տպիչ, պատճեն, սկան/, A4, 28-33 էջ/րոպե արագության	հատ	122500	4	490000
Ընդամենը չորս հարյուր իննսուն հազար ՀՀ դրամ							490000

Ապրանքը մատակարարվում է վաճառողի կողմից ՀՀ Սյունիքի մարզ ք. Մեղրի Գործարարների 42 հասցեով՝ պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, պահանջվող քանակը առավելագույնն է:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ
ՀՀ Սյունիքի մարզ ք. Մեղրի Գործարարների 42
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ " մ/ճ Մեղրի
Հ/Հ 16099003354200
ՀՎՀՀ 09705024
Էլ. Փոստ agarak-hosp@mail.ru
Հեռ.0286-60685

Տնօրեն՝ ժ/պ / Ա. Օհանջանյան

ԿԱՏԱՐՈՂ

«ՓՄՁ սպասարկման գրասենյակ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի , Զ. Անդրանիկի 28/9
Բանկ " Արդշինբանկ "ՓԲԸ մ/ճ Մեղրի
Հ/Հ 2470201200090000
ՀՎՀՀ 01259015
Էլ. Փոստ pmdz@list.ru
Հեռ. 093312233

Տնօրեն՝ / / Ս. Մաթևոսյան

Восстановимая подпись

X 28.08.2020

Styopa Matevosyan

Подписано: MATEVOSYAN STYOPA 2902640382

Հավելված 2
<< _28_ >> օգոստոսի 2020թ. կնքված
N«ՄՏԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ-20/7» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերովնախատեսվածչափաբաժնի ամարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը` ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին` ըստ ամիսների, այդ թվում**				
			սեպտեմբեր	հոկտոմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30239130/1	Տպիչ սարք	245000	367500	367500	490000	490000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ
ՀՀ Սյունիքի մարզ ք. Մեղրի Գործարարների 42
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ " մ/ճ Մեղրի
Հ/Հ 16099003354200
ՀՎՀՀ 09705024
Էլ. Փոստ agarak-hosp@mail.ru
Հեռ.0286-60685

Տնօրեն` ժ/պ / / Ս. Օհանջանյան

ԿԱՏԱՐՈՂ

«ՓՄՁ սպասարկման գրասենյակ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի , Զ. Անդրանիկի 28/9
Բանկ " Արդշինբանկ "ՓԲԸ մ/ճ Մեղրի
Հ/Հ 2470201200090000
ՀՎՀՀ 01259015
Էլ. Փոստ pmdz@list.ru
Հեռ. 093312233

Տնօրեն` / / Ս. Մաթևոսյան

Восстановимая подпись

X 28.08.2020

Styopa Matevosyan

Подписано: MATEVOSYAN STYOPA 2902640382